1716 Յովհ. Տուբիա Աւկուստինովիչ † 1751
1752 Յակովբ Աւկուստինովիչ † 1783
1783 Յակովբ Թումանովիչ † 1798
1799 Յովհաննէս Սիմոնովիչ † 1816
1817 Գայետան Վարդերեսովիչ † 1831
1831 Սամուէլ Ստեփանովիչ † 1858
1858 Գրիգոր Սիմոնովիչ † 1875
1876 Գրիգոր Յովսէփ Ռոմաշքան † 1881
1882 Սահակ Նիկողայոս Իսաքովիչ

Թէ՛ մեր այս գրոց և թէ ուրիշ յիշատակք՝ յայտնեն, որ զատ յարքեպիսկոպոսէն Լեմպէրկի՝ եղած են երբեմն ի Լեհս, ի Ռումենիա և ի սահմանակից նահանգս, ուրիշ Հայ եպիսկոպոսք ևս, կամ անոր հպատակք կամ ինքնագլուխք, գուցէ և ըստ բանից Մեսրովպայ կաթողիկոսի (եր. 6) առանց հրամանի կաթողիկոսին և ոչ ուղղակի: Այս կարևոր խնդրոյ քննութիւնը թողլով, ոչ անկարևոր համարիմ այս տեղ նշանակել՝ քանի մի տեղեաց մեզ ծանօթ եպիսկոպոսներ: Այոնց գլխաւորն է Մոլտաւիա, Պուղտան *կամ* Սեչով *կոչմամբ. յիշուած եպիսկոպոսքն, յամս՝* 1551, *Յովհաննէս Սեչովցի.* 1578–1607, *Յովհաննէս Պոչտանցի.* 1628, *Ղազար Բաբերդցի.* 1640, *Անդրէաս.* 1662 + 1678 *Յովհաննէս Քարիմատնեց.* 16.. *Սահակ, ձեռնադրեալ ի Դ Յակովբայ կաթողիկոսէ.* 1680, *Մինաս Ջիլիֆտար:*

Ի Կամենից. 1577, *Յովհաննէս Աւագերէց, զոր հաստատէ հօն անձամբ՝ Թադէոս կաթողիկոս.* 1627, *Թորոս եպիսկոպոս, ձեռնադրեալ ի Մելքիսեդ կաթողիկոսէ: —* Ի Եազլովից *յիշուի (եր.* 191) 1655, *Անտոն եպիսկոպոս: —* Ի Սերադ. 1507, *Սիմոն եպիսկոպոս (եր.* 161): — Ի Մոհիլեւ, *ի սկիզբն դարուս* (1809), *կայր Յովսէփ եպիսկոպոս Քրիստոֆորովիչ* † 1816. *որոյ փոխանորդ կ'ըլլայ,* 1816, *կանոնիկոսն Անտոն Վարդերեսովիչ:*

Բայց քան զասոնք և քան զԼովի արքեպիսկոպոսունս իսկ՝ հնագոյն, որով և հետաքննագոյն է Ունգարիոյ կողմանց Հայ եպիսկոպոսն, ԺԴ. դարու կիսէն առաջ, յամին 1343, *Մարտիրոս եպիսկոպոս Հայոց ի* Թոլմաք *կամ Տոլմաք քաղաքի,* Կրանի *(և ըստ գրոց Սարիգոնինի) մետրապօլտին օժանդակ. այս եպիսկոպոսին կնիքն այլ գտուած է լատին գրութեամբ,* Martini Episcopi Armenorum de Tolmachy, (Կնիք *Մարտիրոսի եպիսկոպոսի Հայոց Տոլմաքայ): Նոյն քաղքին Հայ եպիսկոպոսն յիշուի և յամի* 1355, *հաւանօրէն նոյն Մարտիրոսն: Յետ երեք և կէս դարուց՝ Վարդան Յօհաննեան կ'իմացընէ մեզ (եր.* 129. 199), *որ յամի* 1691 *ձեռնադրեր է զՕգսենտ Վերծերեսքոյ կամ Վօծրեսգուչ Պօչանցի՝ եպիսկոպոս Հայոց* յԱլատին:

Մեր վերոյիշեալ Լեհահայոց ժամանակագիրք՝ աւելի իրենց եկեղեցւոյ և եկեղեցականաց վրայօք գրած են՝ քան քաղաքական կենաց. և անոնց